«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

1 Հուլիսի 2022, N 13 - 2

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի՝ 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում իրականացված ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությամբ նախատեսված գործողությունների կատարման մասին հաշվետվությունը (զեկուցող՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ս.Վ.Խաչիկյան)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:

2. **Ֆակուլտետի դեկանատին՝**
   1) համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումները քննարկել ֆակուլտետի խորհրդի նիստերում, արձանագրել խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ մշակել միջնաժամկետ միջոցառումներ (հաստատված ժամանակացույցերով և կատարողներով),
   2) համալսարանի ռազմավարական նպատակների իրականացման շրջանակներում նպաստել ֆակուլտետի ամբիոնների ակադեմիական կազմի երիտասարդացմանը և անհրաժեշտ մասնագիտական որակներով կադրերի ներգրավմանը,

3) ֆակուլտետի խորհրդի նիստերում պարբերաբար անդրադառնալ դասալսումների, դրանց նկատմամբ հսկողության և արդյունքների քննարկման գործընթացներին,
4) աշխատել ամբիոնների հետ՝ մագիստրոսական կրթական ծրագրերի շրջանակներում դասավանդման և մեթոդական այլ նյութերի որակի բարձրացման նպատակով,
5) ուսանողների հաճախումների և ակտիվության գրանցման նկատմամբ հսկողությունն ու մշտադիտարկումները դարձնել ավելի պարբերական՝ արձանագրելով նկատվող խնդիրները,
6) աշխատել ամբիոնների հետ՝ կուրսղեկների աշխատանքի արդյունավետության բարձրացման և ՈՒԳԸ աշխատանքներում դասավանդողների ներգրավվածության բարձրացման ուղղությամբ,
7) նպաստել ուսումնամեթոդական նյութերի, հետազոտական աշխատանքների և կրթական ծրագրերի արդիականացման աշխատանքներին և մշակել դրանց հանրայնացմանն օժանդակող միջոցառումներ,
8) նպաստել ուսանողների ու դասավանդողների մասնակցությամբ ծրագրային հայտերի մշակման աշխատանքներին, ինչպես նաև միջազգային շարժունության ծրագրերին մասնակցության խրախուսմանն ուղղված աշխատանքներին,
9) ուշադրություն դարձնել էթիկայի կանոնների և աշխատանքային կարգապահության հետ կապված հարցերի համակողմանի քննարկմանը,
10) բարելավել դեկանատի աշխատանքները ուսանողներին մատուցվող ծառայությունների շրջանակում,
11) յուրաքանչյուր հանձնարարականի կատարման հետ կապված ժամանակացույցը քննարկել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ:

3. **Ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնի վարիչներին՝**
1) պահպանել մշտական կապ կրթական ծրագրերի արդիականացման համատեքստում՝ բուհ-աշխատաշուկա-գործատու փոխգործակցության շրջանակում,
2) իրականացնել դասընթացների առարկայական ծրագրերի արդիականացում՝ ուշադրություն դարձնելով միջառարկայական նորամուծություններին,

3) նպաստել արդիականացված կրթական ծրագրերին համապատասխան ուսումնամեթոդական նյութերի (դասագրքեր, խնդրագրքեր, տեսադիտարկման հարթակներ և այլն) մշակմանը,
4) խրախուսել կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանքների և ուսումնամեթոդական նյութերի մշակումները,
5) համապատասխանեցնել փորձառությունների ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին ու բուհի ռազմավարական նպատակներին,
6) խթանել ուսանողների ու դասավանդողների միջազգային շարժունության ուղղությամբ իրականացվող աշխատանքները կիրառական հետազոտությունների համատեքստում,
7) ակտիվացնել միջազգային հետազոտությունների ու փոխանակման ծրագրերի լավագույն փորձի տեղայնացման աշխատանքները,
8) նպաստել ուսանողների ու համապատասխան ամբիոնների միջև կապի ամրապնդմանը կուրսղեկների, ուսանողական գիտական ընկերության անդամների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների միջոցով,
9) ուսումնական գործընթացների հետ կապված բոլոր աշխատանքներն ամփոփել Moodle էլեկտրոնային հարթակում մինչև 2022 թվականի օգոստոսի 30-ը,
10) հաճախ իրականացնել առաջադիմության մշտադիտարկում և արդյունքները քննարկել ֆակուլտետի խորհրդի նիստերում,
11) սույն որոշումը քննարկել ամբիոնների առաջիկա նիստերում ու ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված հանձնարարականների կատարման համար:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դիանա Գալոյան**

2022 թ. հուլիսի 1
Երևան